

**ՕՐՈՒԱՆ ՀԵՏ**

**«Մեյֆոնեան»ը... Ինչո՞ւ**

ՎԱՋԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Եւ այսպէս, որոշուած է Սփիւռքի տարածքին մտատարապէս ճտատանակներէ ի վեր գործող «Մեյֆոնեան» կրթական հաստատութիւնը փակել: Հայ բարեգործական ընդհանուր միութեան Կեդրոնական վարչութեան անդամները միաձայնութեամբ յանձնեցան այդ որոշումին, միայն անորոշ ու աղօտ ընդհանրացումներ կատարելով իրենց հիմնաւորումներուն մէջ: «Պիտի վաճառուի-պիտի չվաճառուի» վէճը եւ վերջ գտաւ այս ձեռնարկ՝ պիտի չվաճառուի, բայց պիտի փակուի:

Ճիշդ է, «Մեյֆոնեան»ի տնօրինումն ու յանձնաձումը կը պատկանի Հ.Բ.Ը.Մ.ին, սակայն այս վերջինը եթէ ոչ օրինական (չենք գիտեր), գէթ բարոյական պարտք մը պէտք է գգար հանրութեան բացատրութիւն մը տալու, թէ ի՞նչ պատճառ(ներ)ով որոշուած է վարժարանը փակել: Կիպրոսի մէջ հայկական վարժարանները իրենց մեծ թիւով իրա՞ր կը հրմշտկէին արդեօք եւ յանկարծ գաղութին թիւը աննախատեսելի տոկոսով կտոտրակուեցա՞ւ: Կը կասկածիմե՞...

Այս օրերուն, համայն հայութիւնը, Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, կը դիմագրաւէ նորանոր եւ բազմատեսակ մարտահրաւրւներ, որոնք յաղթահարելու համար յաւելեալ կազմակերպութեան միջոցներով վճարակաւորութիւն եւ մանաւանդ՝ յաւելեալ գոհազուրկումներ անհրաժեշտ են: Անհրաժեշտ է ամրապնդել մեր բոլոր կառոյցները եւ առաջին հերթին՝ կրթական հաստատութիւնները: Մեր կարծիքով, այս պարագային՝ Սփիւռքի կազմակերպութեան նպատակները, այդ ուղղութեամբ տարուող նիւթերուն դէմ հարուած կը նկատենք «Մեյֆոնեան»ի փակումը:

Հարցը չի վերաբերիր սոսկական անուտրա-վարչական տնօրինումի, որովհետեւ «Մեյֆոնեան»ի նման կրթական հաստատութիւն մը (ինչպէս նման բազմաթիւ հիմնարկներ) շահադիտական նպատակներով հիմնուած վաճառատուն չէ, որուն տէրը նախկին շահը չկարենալով պահանջել կ'որոշէ փակել գայն: «Մեյֆոնեան»ի աշակերտութեան կարեւոր տոկոսը այլ գաղութներէ կու գայ եւ իբրեւ այդպիսին՝ դպրոցը կը ծառայէր բազմաթիւ գաղութներու: Իսկ եթէ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը որոշած է կրնատել իր ծախսերը ու այդ ծիրէն ներս փակել տնտեսապէս իրենք գիտենք չար-դարացնող իր (կամ իրեն յանձնընուած) հաստատութիւնները Սփիւռքի տարածքին, կը նշանակէ, որ Սփիւռքի ու անոր դերակատարութեան մասին Կեդր. վարչութեան պատկերացումները շատ համահունչ չեն հայութեան այսօրուան իրականութեան եւ վաղուան տեսլականին:

**ԱՃԱՐԻԱ**  
**Սահակաշիլի**  
**Համաձայնութիւն Մը**  
**Կը Գոյացնէ Ապաշիժէի Հետ**



Ապաշիժէի համակիրներ կը բողոքեն Սահակաշիլիի կառախումբին շրջանէն անցնելուն ընթացքին

**ՊԱԹՈՒՄ, «Ռոյթըրզ».** - Հինգշաբթի, Մարտ 18ին, Վրաստանի նախագահ Միխայէլ Սահակաշիլի երեք ժամ տեւած բանակցութիւններ ունեցաւ ապստամբ Անարիա նահանգի ղեկավար Ապաշիժէի հետ, որմէ ետք երկու ղեկավարները յայտարարեցին, թէ կարելի եղած է լուծել վերջին հինգ օրերուն շրջանը զինեալ բա-

(Շար. 11րդ էջ)

**ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵԴՐ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ՝**  
**Հայկական Ցեղասպանութեան Ճանաչումը**  
**Ապահովելու Աշխատանքի Վերաշխուժացում**

Գերմանահայոց կեդր. խորհուրդի նախագահ տորթ. Շաւարշ Օվասափեան Մարտ 17ին «Ասպարէզ»ին յղուած հաղորդագրութեամբ մը յայտնեց, թէ Գերմանահայոց կեդրոնական խորհուրդը Շաբաթ, Մարտ 13ին, էլֆուշտատի մէջ տեղի ունեցած իր տարեկան ընդհանուր ժողովին ընթացքին, քննարկած է նաեւ Հայկական Ցեղասպանութեան քաղաքական ճանաչման առջև ջգուած դժուարութիւններն ու հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ գաղութի կազմակերպական ուժեղացման հետ առնչուող հարցերը: Հաղորդագրութեան մէջ կ'ըսուի.

«Իբրեւ պահուած այդ բոլորին, ուրախութեամբ կը յայտնենք, թէ

**Ջաւախքի Հայկական Կազմակերպութիւնները**  
**Կը Դիմեն Եւրոպայի Խորհուրդին**

**Ա.ԽԱԼՔԱԼԱՔ, «Ա-ԻՆՖՕ».** - Մարտ 17ին, Սամցխէ-Ջաւախքի հայկական հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու խորհուրդի պատուիրակութիւնը Թիֆլիսի մէջ Եւրոպայի խորհուրդի տեղեկատուական գրասենեակին յանձնեց նամակ մը՝ ուղղուած Եւրոպայի խորհուրդի գլխաւոր քարտուղար Ուոլթըր Շուիմըրի:

Նշենք, որ Փետրուար 18-20ին, Շուիմըր այցելած էր Վրաստան, եւ նախագահ Միխայէլ Սահակաշիլ-

լի եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ հանդիպումներու ժամանակ շեշտած էր, որ ինք կողմնակից է, որ Վրաստանի պետական կառոյցը ըլլայ ապակեղրոնացուած, տեղական եւ շրջանային ուժեղ իշխանութիւններով: «Անշուշտ, այս նշանակում է, որ Եւրոպայի խորհուրդի չափանիշները՝ օրէնքի գերակայութեան, մարդկային իրաւունքների եւ բազմակարծիք ժողովրդավարութեան գծով, պէտք է գործադրուեն բոլոր մաս- (Շար. 11րդ էջ)

**ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ**  
**ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝**

**Հայաստան Դիւանագիտական Նոթով**  
**Իր Դիրքորոշումը Փոխանցեց**

**ԵՐԵՒԱՆ, «Արմէնփրէս».** - Հայաստանի իշխանութիւնները դիւանագիտական նոթ յղեցին Մեծն Բրիտանիոյ կառավարութեան՝ Երեւա-

նի մէջ Մեծն Բրիտանիոյ դեսպան Թորտա Էպլթ-Ուալթի յայտարարութեան կապակցութեամբ: Այս մասին երէկ յայտնեց ՀՀ արտաքին գործոց նախարարութեան բանբերը, անդրադառնալով դեսպան Էպլթ-Ուալթի Հայկական Ցեղասպանութեան առնչութեամբ ունեցած արտայայտութեան:

Նախարարութեան բանբերը ըսաւ. «Մենք ափսոսանք ենք յայտնում նման դիրքորոշման առթիւ: Աշխարհի որոշ երկրներ ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը, որոշները՝ դեռեւս ոչ: Ան-

(Շար. 11րդ էջ)

**Նախագահ Քոչարեան Նոր Դատախազէն**  
**Կ'ակնկալէ Աւելի Վնուական Աշխատանք**

**ԵՐԵՒԱՆ, ՀՀ Նախագահի Մամուլի Գրասենեակ.** - Նախագահ Քոչարեան երէկ Հայաստանի գլխաւոր դատախազութեան ղեկավար կազմին ներկայացուց նորանշանակ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը եւ յայտարարեց, թէ անկէ կ'ակնկալէ

աւելի վճարակալութիւն: Քոչարեան, խօսելով դատախազութեան ընելիքներու մասին յայտնեց, որ իր տպաւորութեամբ դատախազութեան՝ իբրեւ կարեւորագոյն համակարգի, տեղը, արժէքը, հեղինակութիւնը նուազած է եւ առաջնահերթ պահանջ է, որ դատախազութիւնը իր գործունէութեամբ պետական համակարգի մէջ գրաւէ այն տեղը, որ սահմանադրութեամբ եւ օրէնսդրութեամբ նախատեսուած է:

Ըստ Քոչարեանի, դատախազութիւնը իր կարեւոր տեղը պէտք է (Շար. 11րդ էջ)

**Փակման Ցատուկ Հանդիսութեամբ Իրենց Աւարտին**  
**Հասան Հ.Մ.Ը.Մ.ի 20րդ ԳԱ.Հ.Ա.Մ.ի Մրցումները**

**ՄԱՐՏ ԲԷՇԻՇԵԱՆ**

Շուրջ երկու ամիսներու մրցակցութենէ ետք, Կիրակի, 14 Մարտ 2004, կէսօրէ ետք ժամը 4:30ին, Կլէնտէյլ քոլէճի ֆուլթուրի մարզադաշտին վրայ, փակման յատուկ հանդիսութեամբ իրենց աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. վարչութեան կազմակերպած Քալիֆորնիոյ Հայ աշակերտական 20րդ մարզախաղերը՝ ԳԱ.Հ.Ա.Մ.ը:

Հանդիսութեան ներկայ էին բազմաճարիր ծնողներ, աշակերտներ, մարզախաղերուն մասնակցած հայկական վարժարաններու տնօրէններ, ուսուցիչ-ուսուցչուհիներ եւ մարզասէր հոծ հասարակութիւն մը:



Աշակերտները կը փողանցեն

Պաշտօնական հիւրերու կարգին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. վարչութեան անդամներ եղր. Մհեր Դաւիթեան եւ եղր. Մանուէլ Մարտիչեան, թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ Աշոտ քհնյ. Գամպուրեան, Կլէնտէյլի քահանայապետ Գրիգոր քահանայապետը (Շար. 5րդ էջ)

**ԱՅՍ ԹԻՒՈՎ**

- Կիզակէտ ..... էջ 2
- Ներագոյնից Ֆաշիզմ ..... էջ 3 եւ 8
- Յիշագոյնից Լուրեր ..... էջ 4
- Հայաստան ..... էջ 5
- Գաղութի Կեանքէն ..... էջ 5
- Գաղութի Գաղութ ..... էջ 6
- Կնոջական ..... էջ 7
- English Section ..... էջ 9-10
- Մահազդ-Պոզեհանգիստ էջ 12-13
- Կարծ ծանուցումներ ..... էջ 13-16
- Ժամանակացոյց ..... էջ 16
- «Սիւվոր Լոթո» ..... էջ 16